

ՀԱՐՑԱՔՆՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱՅ ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԱԶԳԻՍ ՀԱՅԱՑՑ

Յունիս ամսոյն 15-էն մինչեւ Յուլիսի ըսկիզբը տեւեցին նաեւ այս տարի Խալիպեան Ուսումնարանին տարեկան հարցաքննութիւնները, եւ յետոյ սկսաւ պարապոյ եւ հանգըստեան ժամանակը:

Աւելորդ կհամարիմք երկարօրէն հրատարակել այս տեղ իւրաքանչիւր աշակերտին ամէն մէկ ուսման նիւթերուն մէջ ըրած յառաջադիմութեան չափն ու աստիճանը, որովհետեւ այն արգէն յայտնի է ծնողաց՝ երեք ամիսը մէյմը իրենց յուղարկուած վկայականներէն: Բայց այսքանս համարձակ պէտք է հրատարակեմք իտեղեկութիւն եւ իմխիթարութիւն ամենայն բարեսէր եւ ազգասէր անձանց՝ թէ Խալիպեան Ուսումնարանը նաեւ այս իւր սկզբնաւորութեանը չորրորդ տարոյն մէջ այնպիսի բարոյական եւ ուսումնական պտղաւէտութիւն եւ բարեբերութիւն ցցուց՝ որում յիրաւի սակաւ էին յոյս ունեցողները կամ սպասողները:

Ազգիս օգտին եռանգուն սրտիւ փափաքողները՝ յիրաւի չէին յուսար կըսեմք՝ որ այս նորակառոյց ուսումնարանը կարենայ այժմէն այսպիսի զարմանալի տեսարան մը ընծայել հարիւրաւոր բարեբարոյ եւ բարեկիրթ պատանեաց, որ բոլոր տարին մեղուածան ուսումնասիրութեամբ աշխատելէն ետեւ՝ քաջութեամբ պատասխաննեն ըստ իւրաքանչիւր աստիճանի եւ հասակի՝ իրենց եղած անաշառ հարցմունքներուն:

Նմանապէս եւ ազգիս ճշմարիտ օգտին թշնամութիւն երդուած նախանձուաները ա-

մօթով մնացին արժանապէս՝ երբ տեսան որ իրենց ամէն տեսակ զրպարաութիւնները, չարախօսութիւնները, հակառակութիւնները պարապ եւան մինչեւ ցայդմ. այնպէս որ աշակերտաց թիւը պակսելու տեղ՝ աւելցաւ, եւ որ մեծն է՝ նոցա եռանգը պաղելու տեղ՝ աւելի բորբռքեցաւ, եւ ուսումնարանին բարեկարգութիւնը խանգարուելու տեղ՝ աւելի եւս հաստատութիւն առաւ ու ծաղկեցաւ:

Այս վիճակիս մէջ տեսնելով եւ մեք Խալիպեան Ուսումնարանը իւր հիմնարկութեանը չորրորդ տարւոյն մէջ, կհամարձակիմք հըրաւիրել այս գործոյս վրայ մասնաւոր ուշադրութեամբ մը նայող ազգասէրները, որ կամ անձամբ ականատես լինին մեր խօսքերուն ճշմարտութեանը, եւ կամ իրենց հաւատարմագոյն կարծած ճշմարտախօս բարեկամներուն հարցընեն տեղեկանան, եւ յետոյ՝ եթէ կուղեն՝ դատաստան ընեն Ուսումնարանիս ընթացքին վրայ:

Առաջիկայ սեպտեմբերի 8-ին պիտի փոխադրուի ուսումնարանը այն հոյակապ շէնքը՝ զոր կէս միլիոնէն աւելի ֆրանքով կանգնեց Խալիպեան իշխանը, յաւերժական յիշատակ իւր անուանը եւ պարծանք ազդիս չայոց: Տարակոյս չունիմք որ այս շէնքին զարմանալի կերպով յարմար լինելը ուսումնական բարեկարգութեան՝ մեծապէս օգտակար պիտի լինի անոր մէջ դաստիարակուող մանկանց, եւ գիւրութիւն պիտի տայ անոր կառավարութեանը. Բայց այս բանիս վրայ ընդարձակ խօսիլը սեպտեմբերի ամսատեսակին կթողումք:

